ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Վաղարշապատ համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի «Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի և ենթակա կառույցների 2024 թվականի կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 107-Լ որոշմամբ հաստատված թիվ 2 հավելվածի մեջ կրթության և մշակույթի բաժնում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորված է 2024 թվականի փետրվարի 13-ին Վաղարշապատ համայնքի ավագանու ընդունված թիվ 13-Լ որոշմամբ, որի համաձայն մի շարք համայնքային ծառայողների պաշտոններ են ավելացվել համայնքապետարանի հաստիքացուցակում և Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից կատարվել են համապատասխան փոփոխություններ համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում:

Նշված որոշման հիմքում դրված տեղեկանքում նշվել էր, որ Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի կրթության և մշակույթի բաժնում ավելացվում է 1-ին կարգի մասնագետի հաստիք և այդ հաստիքային միավորով համալրման դեպքում բաժնի աշխատանքները կվերադասավորվեն և կդիտարկվի 2-րդ կարգի մասնագետի կրճատման հնարավորությունը:

Ուստի սույն որոշմամբ սահմանվում է Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի կրթության և մշակույթի բաժնի 2-րդ կարգի մասնագետի /ծածկագիր՝ 3.3-4/ հաստիքի կրճատում, որը զբաղեցված չէ և թափուր է: